# ՎԱՂԸ ՄԱՐՏԻ 8-Ն Է. ՇՆՈՐՀԱՎՈՐ ՁԵՐ ՏՈՆԸ, ՍԻՐԵԼԻ ԿԱՆԱՅՔ


# ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆԿԱՆՈ» (ԼԱՅԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 19 - 520 (16822) ՇԱԲԱԹ 7 ՄԱՐՏԻ 2020Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ՝ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

***Փետրվարի 3-4-ը Վրաստանի կառավարության հրավերով, երկօյա պաշտոնական այցով, Վրաստանում էր գտնվում Հայաստանի կառավարական պատվիրակությունը՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ: Հայաստանի պատվիակության կազմում էին Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը, Ազգային ժողովի փոխխոսնակ, հայ-վրացական բարեկամության խորհրդարանական հանձնաժողովի հայկական կողմի համանախագահ Լենա Նազարյանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը: Պատվիրակության հետ Թբիլիսիում էին Հայաստանի վարչապետի օգնական Հրաչյա Թաշչյանը, վարչապետի մամուլի խոսնակ Մանե Գեւորգյանը, վարչապետի արարողակարգի պատասխանատու Վահե Հակոբյանը, վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար Արմեն Խաչատրյանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի օգնական Սերոբ Հունանյանը, վարչապետի աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակության հետ կապերի բաժնի պետ Կարեն Հարությունյանը:***

Թբիլիսիի Շոթա Ռուսթավելու անվան միջազգային օդանավակայանում Հայաստանի վարչապետին եւ նրա գլխավորած պատվիակության անդամներին դիմավորեցին Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն, պաշտոնատար այլ անձինք:

Օդանավակայանից ավտոշարասյունը, զարդարված Վրաստանի եւ Հայաստանի պետական դրոշներով, ուղեւորվեց Վրաստանի կառավարության գրասենյակ, որտեղ կայացավ Հայաստանի վարչապետի դիմավորման պաշտոնական արարողությունը: Գրասենյակի մոտքի մոտ Հայաստանի վարչապետին ջերմորեն դիմավորեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:

### ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻ ԵՎ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՌԱՆՁՆԱԶՐՈՒՅՑԸ

Դիմավորման պաշտոնական արարողության ավարտին կայացավ Գիորգի Գախարիայի եւ Նիկոլ Փաշինյանի առանձնազրույցը:

Բացելով բանակցությունները՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան ասաց.

- Պարոն վարչապետ, թանկագին Նիկոլ, ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ հյուրընկալել Ձեզ Վրաստանում: Մենք կառավարությունների մակարդակով ամենօրյա ռեժիմով աշխատում ենք, որ է՛լ ավելի խորաց-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ



***Հայաստանի կառավարության պատվիրակության Վրաստան կատարած այցի շրջանակներում, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին հանդիպում ունեցավ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ:***

Ողջունելով Հայաստանի վարչապետին՝ Վրաստանի նախագահը բարձր գնահատեց երկու երկրների բարեկամական հարաբերությունները եւ նշեց, որ քննարկված հարցերն ու նախաձեռնությունները նոր խթան կհանդիսանան փոխհարաբերությունների հետագա զարգացման եւ ամրապնդման համար:

Իր հերթին, Նիկոլ Փաշինյանը նշեց, որ ուրախ է տիկին Սալոմեին հանդիպելու եւ երկու երկրների հարաբերությունների խորացման ու զարգացման հեռանկարները քննարկելու հնարավորության համար:

- Հաճելի է հերթական անգամ հանդիպել Ձեզ: Կարող եմ արձանագրել, որ մեր առաջին հանդիպումից ի վեր հայ-վրացական հարաբերությունները դրական զարգացում ունեն,- ասաց Նիկոլ Փաշինյանը՝ համոզմունք հայտնելով, որ այցի ընթացքում կուրվագծվեն միջպետական համագործակցության զարգացման նոր հնարավորություններ:

Հանդիպմանը կողմերը բանակցեցին օրակարգային մի շարք հարցերի շուրջ: Այնուհետեւ, քննարկումները շարունակվեցին պաշտոնական ճաշի շուրջ:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԵՍ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՉԵՄ ԵՎ ՈՉ ԷԼ ԿԼԻՆԵՄ, ՈՎ ԿՓՈԽԻ ՈՒՂԻՆ, ՍԵՓԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ»

***Մարտի 4-ին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, երկրի ղեկավարի պաշտոնում երկրորդ անգամ տարեկան զեկույցով, հանդես եկավ երկրի խորհրդարանի առջեւ:***

Խորհրդարանի դահլիճում էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, երկրի կառավարության անդամներ, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչներ: Նախագահի ելույթին բոյկոտ հայտարարեցին խորհրդարանական ընդդիմության, ինչես նաեւ անկախ պատգամավորական խմբակցությունների անդամները:

Վրաստանի նախագահը, ի տարբերություն նախորդ ելույթի, հիմնական շեշտը դրեց բնագավթված տարածքների, ընտրական օրենսգրքի հետ կապված թեմաների վրա: Ինչպես

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻ ՄՈՒՏՔՆ ՈՒ ԵԼՔԸ՝ ԱՌԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՁՆԱԳՐԻ

***Մարտի 3-ին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի Վրաստան կատարած պաշտոնական այցի շրջանակներում, կայացավ Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանու եւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի հանդիպումը:***

Հանդիպմանը ԱԳ նախարարներն անդրադարձան տարածաշրջանային եւ միջազգային հրատապ հարցերի, նոր տիպի կորոնավիրուսի տարածման կանխարգելման ուղղությամբ ձեռնարկվող համատեղ քայլերին:

Դավիթ Զալկալիանին եւ Զոհրաբ Մնացականյանը կարեւորեցին մարդկանց միջեւ շփումների դյուրացումը եւ հասարակությունների միջեւ կապի ամրապնդումը, որի վերաբերյալ վերջիններիս կողմից ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի կառավարությունների միջեւ քաղաքացիների տեղաշարժի դյուրացման մասին» մտադրությունների հուշագիր: Այն ենթադրում է, որ վերջնական համաձայնության դեպքում, երկու երկրների քաղաքացիները կարող են ազատ ելք ու մուտք ունենալ ID (նույնականացման) քարտերով, առանց միջազգային անձնագրի:

Նշենք, որ, մինչ այդ, Վրաստանը ID քարտերով ելք ու մուտքի իրավունք ուներ Թուրքիայի եւ Ուկրաինայի հետ:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ՍԱԼՈՄԵ ԶՈՒՐԱԲԻՇՎԻԼԻ. «ԵՍ ԱՅՆ ԵՐԿՐԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՉԵՄ ԵՎ ՈՉ ԷԼ ԿԼԻՆԵՄ, ՈՎ ԿՓՈԽԻ ՈՒՂԻՆ, ՍԵՓԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նշեց Սալոմե Զուրաբիշվիլին, իշխանությունների եւ ընդդիմության միջեւ տարակարծությունը, սուր ընդդիմությունը բնական երեւույթ է, հատկապես նախընտրական ժամանակաշրջանում, սակայն երբ երկիրը գտնվում է բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում, եւ նրա տարածքի 20 տոկոսը բռնազավթված է, անհրաժեշտ է ավելի մեծ զգուշություն:

- Մենք չպետք է թույլ տանք, որ քաղաքական դիմակայությունը առաջացնի ճգնաժամ կամ ապակայունացում: Հետեւաբար, անընդունելի է, որ բռնազավթման հարցը դառնա քաղաքական շահարկումների առարկա: Այսպիսով, միանգամայն անընդունելի է սեփական կամ քաղաքական ամբիցիաների եւ շահերի համար, վտանգի ենթարկել երկրի ուղին, մանավանդ, երբ այս մեղադրանքները անհիմն են: Անձամբ ես՝ որպես երկրի նախագահ, թույլ չեմ տա զրպարտություն, որը քայքայում է Վրաստանը: Ես այն երկրի նախագահը չեմ եւ ոչ էլ կլինեմ, ով կփոխի ուղին, սեփական ընտրությունը, բոլորդ կարող եք համոզված լինել,- ասել է Սալոմե Զուրաբիշվիլին:

Խոսելով երկրի առջեւ ծառացած մարտահրավերների մասին՝ Սալոմե Զուրաբիշվիլին հայտարարեց, որ աշխարհը, ուր 30 տարի առաջ Վրաստանը վերադարձավ որպես անկախ երկիր, այսօր այլ առանձնահատկությունների կրող է: 70 տարի խորհրդային սահմաններում, փակված աշխարհից առանձնացած, մեկուսացված Վրաստանը այս երեսուն տարիների ընթացքում նոր ուղի է որդեգրել:

- Այսօր մեր քաղաքացիների համար սահմանները բաց են, իսկ մեր սահմանները բաց են ուրիշների համար: Աշխարհում ընթացող իրադարձությունները մեզանից անկախ, իսկ մեզ մոտ ընթացող իրադարձություններն աշխարհից անկախ չեն կարող զարգանալ:

Մեր աչքի առաջ միջազգային նոր հարաբերություններ են ձեւավորվում Ամերիկայի, Եվրամիության եւ Ռուսաստանի միջեւ, Մերձավոր Արեւելքում ու Հեռավոր Ասիայում: Երեկվա թշնամիներն այսօր բանակցություններ են սկսում կամ հակառակը,- հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին եւ հավելեց, որ աշխարհի հզոր փոփոխություններն անդրադառնում են նաեւ Վրաստանի վրա:

- Մեր տարածաշրջանի շուրջ չեն հանդարտվում ճգնաժամները, որոնք ցանկացած պահ հնարավոր է վերածվեն զանգվածային հակամարտության:

Միաժամանակ, Վրաստանի առջեւ ծառացած են ծանր մարտահրավերներ. բռնազավթված տարածքներ, որտեղ օկուպացված գոտու երկու կողմերում ամեն օր խախտվում են մարդու իրավունքները: Ռուսաստանի քաղաքականությունը խանգարում է մեր անկախությանն ու ինքնիշխանությանը, ինչպես նաեւ դրացիական հարաբերությունների ձեւավորմանը:

Վերջին ժամանակաշրջանում մեզ համար նոր եւ ծանր մարտահրավեր է ծագել՝ միգրացիայի անդադար հոսք, որն այնպես էլ բարդ ժողովրդագրական վիճակն է՝ավելի է ծանրացնում,- հայտարարել է նախագահը:

ՎՐԱՍՏԱՆ - ԱԴՐԲԵՋԱՆ

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ԷԻՆ

***Մարտի 6-7-ը երկօրյա պաշտոնական այցով Վրաստանի պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին գտնվում էր Ադրբեջանում:***

Այցի շրջանակներում, Վրաստանի պաշտպանության նախարարը հանդիպում ունեցավ իր ադրբեջանցի գործընկերոջ, ինչպես նաեւ երկրի նախագահ Իլհամ Ալիեւի հետ:

Նախագահի նստավայրում կայացած հանդիպմանը կողմերը քննարկեցին տարածաշրջանում տիրող իրավիճակը, ռազմավարական գործընկերության հիմնախնդիրները եւ համատեղ այլ նախագծեր:

Հանդիպմանը Իրակլի Ղարիբաշվիլին նշեց, որ Վրաստանի եւ Ադրբեջանի միջեւ բարիդրացիական հարաբերությունները հիմնված են փոխադարձ վստահության ու ռազմավարական գործընկերության վրա:

Կողմերը գոհունակություն հայտնեցին տարբեր ոլորտներում, այդ թվում՝ ռազմական, երկկողմ հարաբերությունների զարգացման կապակցությամբ:

ԿՐԹԱԿԱՆ

# ՄԵԿՆԱՐԿԵՑ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՈՒՄԸ

***Մարտի 2-ին մեկնարկեց եւ մինչեւ մարտի 30-ը կշարունակվի միասնական ազգային քննությունների մասնակցության գրանցումը:***

Մասնակիցները պետք է գրանցվեն առցանց, գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի հետեւյալ կայքում՝ naec.ge:

Համընդհանուր ազգային քննությունների կենտրոնի լրատվությամբ, դիմորդների գրանցման գործընթացը այս տարի նույնպես անցկացվելու է մի քանի փուլով:

Գրանցման առաջին փուլում դիմորդը պարտավոր է լրացնել անձնական տվյալները, ընտրել քաղաքը, հանձնվող առարկաները եւ, անհրաժեշտության դեպքում՝ հատուկ պայմանը: Առարկաները փոխել կամ ավելացնել, ինչպես նաեւ քննության լեզվի ընտրությունը հնարավոր կլինի մինչեւ մայիսի 7-ի ժամը 18:00-ը ներառյալ:

2020 թվականի նորությունների, կրթական ծրագրերի ցուցակի, հաճախ տրվող հարցերի եւ քննության գործընթացին վերաբերող այլ կարեւոր հարցերին դիմորդները կարող են ծանոթանալ «Դիմորդների տեղեկատուի» մեջ:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

# ԱԲԽԱԶԻԱՅԻ, ԱՅՍՊԵՍ ԿՈՉՎԱԾ, ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱՁԳՄԱՆ ՊԱՀԱՆՋ

***Մարտի 2-ին ինքնահռչակ Աբխազիայի Հանրապետության այսպես կոչված նախագահական ընտրություններում առաջադրված թեկնածու Ասլան Բժանիան թունավորման նշաններով փոխադրվել է Սոչի, ապա՝ Կրասնոդար:***

Ինչպես տեղեկացրել է ինքնահռչակ Աբխազիայի խորհրդարանի խոսնակ Վալերի Կվարչիան, Սոչիի հիվանդանոցի ախտորոշման համաձայն, Ասլան Բժանիան կաթված է ստացել:

Մարտի 3-ին Ասլան Բժանիայի կողմնակիցները ներխուժել են ինքնահռչակ հանրապետության նախագահի պարտականությունները կատարող Վալերի Բգանբայի առանձնասենյակ, որտեղ նախագահի պաշտոնակատարի եւ նախարարների ներկայությամբ առաջադրել են նախագահական ընտրությունները մինչեւ Բժանիայի ապաքինվելը հետաձգելու պահանջը:

Ինչպես արդեն հաղորդել ենք, անցյալ տարվա սեպտեմբերին անցկացված, այսպես կոչված, նախագահական ընտրությունների երկրորդ փուլում հաղթող Ռաուլ Խաջինբան հրաժարական տվեց՝ զանգվածային բողոքի ցույցերի արդյունքում: Աբխազիայում արտահերթ նախագահական ընտրություններն անցկացվելու են ընթացիկ տարվա մարտի 22-ին:

***ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ***



## ՌՈՒՍԱՍՏԱՆ
## ԻԴԼԻԲՈՒՄ ԿՐԱԿԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ

*Մարտի 5-ին Մոսկվայում կայացավ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանի հանդիպումը: Նոր հանդիպման անհրաժեշտությունը ծագեց Սիրիայի Իդլիբ նահանգում ծավալվող իրադարձություններից, որի ընթացքում անմիջական ռազմական ընդհարումներ տեղի ունեցան սիրիական բանակի եւ Թուրքիայի ռազմական աջակցությամբ անջատողականների միջեւ, որոնց ընթացքում երկու կողմերն ունեցան զոհեր:*

*Ռուսաստանի եւ Թուրքիայի նախագահների՝ մարտի 5-ին Սիրիայի հարցով կայացած հանդիպման արդյունքում, ձեռք բերվեցին պայմանավորվածություններ, ըստ որոնց, շահեկան դուրս եկան անմիջական ներգրավված երեք կողմերը:*

*Մասնավորապես, եթե Թուրքիան Իդլիբի հատվածում ուներ դիտակետեր, ապա այժմ ավելացրել է զինուժ՝ իրականացնելով որոշակի պարեկային ծառայություն ռուս գործընկերների հետ: Ռուսները կարողացան եւս մեկ հատվածում ապահովել իրենց ակտիվ ներկայությունը՝ օգնելով ցամաքում իրենց գործընկերներին:*

*Ինչ վերաբերում է Սիրիային, ապա կառավարական ուժերը հասան նրան, որ կարողացան դուրս գալ շատ կարեւոր նշանակության՝ Հալեպը Լաթաքիա, Դամասկոս ուղղությունների հետ կապող մայրուղիներ:*

## ԹՈՒՐՔԻԱ
## ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻՆ «ՃԱՆԱՊԱՐՀՈՒՄ» ԵՆ ԵՎՐՈՊԱ

*Թուրքիան որոշել է այլեւս չկանգնեցնել դեպի Եվրոպա գնացող սիրիացի փախստականներին: Թուրք իրավապահները, առափնյա ծառայությունը եւ սահմանային ծառայությունն արդեն ստացել են համապատասխան հրաման:*

*Հատկանշական է, որ Իդլիբում վերջերս զարգացած իրադարձությունների ֆոնին, առաջացել է միգրանտների նոր ալիք. մոտ մեկ միլիոն մարդ լքել է իր տունը:*

*Թուրքիայի որոշումը խիստ քննադատության ենթարկվեց եվրոպական երկրներում: Մասնավորապես, Հունաստանի վարչապետ Կիրիակոս Միցոտակիսի խոսքով, Թուրքիան հազարավոր մարդկանց օգտագործում է որպես աշխարհաքաղաքական լծակ սեփական նպատակների համար:*

*- Ցավոք, Թուրքիան դարձել է միգրանտների պաշտոնական մաքսանենգ,- ասաց Հունաստանի վարչապետը:*

## ՈՒԿՐԱԻՆԱ
## ՀԱՍՏԱՏՎԵՑ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԿԱԶՄԸ

*Մարտի 3-ին Ուկրաինայի կառավարությունը՝ վարչապետ Ալեքսեյ Գոնդարուկի գլխավորությամբ, պաշտոնաթող եղավ: Երկրի նախագահ Վլադիմիր Զելենսկին վարչապետի պաշտոնում առաջադրեց Դենիս Շմիգալի թեկնածությունը:*

*Մարտի 4-ին Ուկրաինայի Գերագույն ռադան հաստատեց Ուկրաինայի կառավարության նոր կազմը, որն առաջարկեց վարչապետ Դենիս Շմիգալը:*

*Պաշտոնները պահպանել են, մասնավորապես՝ ներքին գործերի նախարար Արսեն Ավակովի եւ փոխվարչապետ Միխայիլ Ֆյոդորովի: Ուկրաինայի ԱԳ նախկին նախարար Վադիմ Պրիստայկոն նշանակվել է Եվրոպական եւ Եվրատլանտյան ինտեգրման հարցերով փոխվարչապետ:*

## Ճաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ

# ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐՈՎ ՄՇԱԿՎԱԾ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

***Մարտի 5-ին Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն ընտրական հարցերի առնչությամբ հանդիպում ունեցավ Եվրամիության հրավիրված փորձագետների, ԱՄՆ-ի դեսպանության եւ Եվրամիության պատվիրակության ներկայացուցիչների հետ: Հանդիպմանը քննարկեցին ԵԱՀԿ/ՕԴԻՐ-ի հանձնարարականների համաձայն «Ընտրական օրենսգրքում» նախատեսված փոփոխությունները:***

- Ընտրական օրենսդրության մշակումը շարունակվում է. փոփոխությունների նախագիծն ու նախաձեռնությունները, որոնք պատրաստվել են ԵԱՀԿ/ՕԴԻՐ-ի հանձնարարականների նախատեսմամբ, դրական են, եւ մեր ցանկությունն է, դրանք իրականացնել քաղաքացիական հանրության ու քաղաքական կուսակցությունների հետ,- հայտարարեց խորհրդարանի նախագահը:

Հիշեցնենք, որ միայն համամասնական ընտրակարգով ընտրությունները անցկացնելու վերաբերյալ միացյալ ընդդիմության առաջարկությանն ի պատասխան, «Վրացական երազանք» կառավարող կուսակցությունը հանդես եկավ նախ մեծամասնական-համամասնական 50/100, ապա 40/110 համեմատությամբ ընտրակարգի հաստատման նախաձեռնությամբ: Որպես լրացում՝ կառավարող թիմն առաջարկում է օրենսգրքում հաշվի առնել նաեւ 40 տոկոսի սկզբունքը, այսինքն, ընտրողների ձայների 40 եւ ավելի տոկոս հավաքած կուսակցությունը միայն կարող է հավակնել միակուսակցական կառավարության ձեւավորմանը: Միացյալ ընդդիմությունը բարձրացրեց նոր 30/120 տարբերակը: Հարցի վերջնական կարգավորման համար, ըստ ընտրական օրենսդրության, մնացել է մի քանի օր:

Կառավարող թիմի հավաստմամբ, ընտրական հարցերի վերաբերյալ համաձայնությունը կախված է ոչ միայն իշխանությունից, այլեւ բոլոր կողմերից: Ինչպես նշեց խորհրդարանական մեծամասնության ղեկավար Մամուկա Մդինարաձեն, իշխող թիմը գիտակցում է պատասխանատվությունը եւ ձեռնարկել է արդյունավետ քայլեր:

- Ես ցանկանում եմ անդրադառնալ վերջին շրջանի կարեւոր մարտահրավերին, որը կոչվում է ընտրական համակարգի վերաբերյալ համաձայնություն: Մեր գործընկերները, ռազմավարական գործընկերության ներկայացուցիչները, որոնց մենք շնորհակալություն ենք հայտնում, կոչ են անում համաձայնության գալ: Համաձայնությունը պայմանավորված է երկու կողմերով, ոչ միայն մեկով: Մենք ստանձնել ենք պատասխանատվություն եւ ձեռնարկել համապատասխան արդյունավետ քայլեր,- ասաց Մամուկա Մդինարաձեն:

ՊԵՏԲՅՈՒՋԵ

# ԼՐԱՑՈՒՑԻՉ 200 ՄԻԼԻՈՆԸ ԿՇԱԽՍՎԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, դեռեւս անցյալ տարվա դեկտեմբերին, սահմանված պայմանակարգի համաձայն, խորհրդարանը հաստատեց հեղինակավոր կազմակերպությունների խորհրդատվությունների արդյունքում ձեւավորված 2020 թվականի պետական բյուջեն՝ գրեթե 14 միլիարդ լարի:***

Սակայն, արդեն 2020 թվականի հունվարին, երկրի ֆինանսների նախարարությունը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի, առաջին ամսվա պետեկամուտները զգալիորեն գերազանցել են ծրագրվածը, ինչը թույլ է տալիս պետբյուջեն ավելացնել գրեթե 200 միլիոն լարիով: Լրացուցիչ գումարը պետբյուջեում ներառելու նպատակով, գերատեսչությունը պետբյուջեի վերանայման նախաձեռնությամբ դիմել է Վրաստանի խորհրդարանին:

Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանու խոսքով, հունվարի արդյունքները հնարավորություն են տալիս նվազագույնը 200 միլիոնով ավելացնել ֆինանսավորումը, քանի որ եկամուտները գերազանցել են սպասելիքները: 100 միլիոնն ուղղվելու է մունիցիպալիտետների ֆինանսավորմանը: Այս տարի առավելագույն ֆինանսավորում կունենան բռնի տեղահանվածների, աշխատանքի, առողջապահության ու սոցապահովության, տարածքային զարգացման ու ենթակառուցվածքների, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունները:

ՈԼՈՐՏ

# ՄՇԱԿՎՈՒՄ ԵՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԸ

***Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության առաջին փոխնախարար Գիորգի Խանիշվիլին հանդիպում ունեցավ Ասիայի գյուղատնտեսական կոոպերատիվների միավորման ինստիտուտի գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացման փորձագետ Տերունում Հիրոշիի եւ Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության ներկայացուցիչների հետ:***

Հանդիպմանը նշվեց, որ Վրաստանի բնապահպանության եւ գյուղատնտեսության նախարարությունը հնարավորինս նպաստում է տարբեր ոլորտներում գյուղական կոոպերատիվների ձեւավորման գործընթացին: Գիորգի Խանիշվիլու խոսքով, գյուղատնտեսական կոոպերատիվների հիմնումը՝ որպես գյուղատնտեսության զարգացման կարեւորագույն գործոն, երկրի առաջնահերթություններից մեկն է: Այդ առումով մեծ նշանակություն ունի գործընկեր երկրների, այդ թվում՝ Ճապոնիայի փորձը գյուղատնտեսական կոոպերատիվների կազմավորման գործում: Հանդիպմանը կողմերը քննարկեցին հանձնարարականներ գյուղատնտեսական կոոպերատիվների ձեւավորման խրախուսման գործում:

ԻՐԱՎԱԿԱՆ

# ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ԲՈՐԺՈՄԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՆ ՈՒ ՍԱԿՐԵԲՈՒԼՈՅԻ ՆԱԽԱԳԱՀԸ

***Դեռեւս փետրվարի 28-ին պետական անվտանգության ծառայության հակակոռուպցիոն գործակալության աշխատակիցները կաշառակերության համար Բորժոմիում ձերբակալեցին երեք անձանց:***

Ձերբակալվածների թվում են Բորժոմիի մունիցիպալիտետի քաղաքապետ Լեւան Լիպարտիան, սակրեբուլոյի նախագահ Գիորգի Գոգիչաիշվիլին եւ գործարար Գիորգի Ուլումբելաշվիլին: Մեղադրանքը ներկայացված է Վրաստանի քրեական օրենսգրքի 338 հոդվածով, որը նախատեսում է հանրային աշխատակցի կամ նրան հավասարեցրած անձի կողմից կաշառքի ստացումը փողի, բաժնետոմսի, այլ գույքի տեսքով եւ դատապարտվում է 5-ից 10 տարվա ազատազրկման:



## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ ՆՎԱԶԵԼ Է

*Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տվյալներով, 2019 թվականի IV եռամսյակում երկրում գործազրկության մակարդակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 1,4 տոկոսային կետով եւ կազմում է 10,9 տոկոս:*

*Գործազրկության մակարդակը, քաղաքային բնակավայրերի համեմատ, ցածր է գյուղական բնակավայրերում: 2019 թվականի IV եռամսյակի տվյալներով գործազրկության մակարդակը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, քաղաքային բնակավայրերում նվազել է 2,5, գյուղական բնակավայրերում՝ 0,1 տոկոսով:*

*Գործազրկության մակարդակն ավելի բարձր է տղամարդկանց, քան կանանց շրջանում: 2019 թվականի IV եռամսյակի տվյալներով, տղամարդկանց գործազրկության մակարդակը 2,4 տոկոսով գերազանցում է կանանց ցուցանիշին:*

## ԹԱՆԿԱՑՈՒՄՆԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Վրաստանի Վիճակագրության ազգային ծառայության հրապարակած տվյալների համաձայն, մեկ տարվա ընթացքում միրգը 25 տոկոսով, կաթնամթերքը՝ 19, իսկ միսը՝ 15 տոկոսով թանկացել է:*

*Ծառայությունը հրապարակել է փետրվար ամսվա գնաճի ցուցանիշը, որի համաձայն, տարեկան գնաճի մակարդակը հասել է 6,4 տոկոսի:*

*Տարեկան գնաճ է գրանցվել մթերքի ու ոչ ալկոհոլային ըմպելիքների վրա՝ 12,7 տոկոսով, նաեւ կաթնամթերքի, մսամթերքի, շաքարի, բանջարեղենի ու ձկնեղենի վրա: Հացը եւ հացահատիկային մթերքի գինն աճել է 5,6 տոկոսով, սուրճինը, թեյինը եւ կակաոյինը՝ 5 տոկոսով:*

## ԽՍՏԱՑՎՈՒՄ Է ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

*Բռնություն գործող անձանց նկատմամբ կկիրառվի նոր մեխանիզմ: Սահմանափակող օրդերի տրմանը կհաջորդի էլեկտրոնային մոնիթորինգի իրագործումը: Օրենքի այս փոփոխության նպատակը բռնության բարձր ցուցանիշի նվազեցումն է եւ կանխարգելիչ միջոցների խստացումը: Ըստ վիճակագրության, չնայած սահմանափակող օրդերի, այնումենայնիվ, տուժածի նկատմամբ միեւնույն բռնության փորձը կրկնվում է շատ հաճախ: Նման դեպքերը երբեմն ունենում են ողբերգական ավարտ:*

## ՔՈՒԹԱՅԻՍԻՈՒՄ ԿՎԱՃԱՌՎԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ

*Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հաստատեց տեղեկատվությունն այն մասին, որ կվաճառվի Քութայիսիի խորհրդարանի շենքը:*

*- Քութայիսիի շենքն ունի իր նշանակությունը, այն պետք է ստանա նոր, տնտեսապես առավել գրավիչ նշանակություն: Քութայիսիի ապագան կրթությունն է, բժշկությունը, լոջիստիկան ու բազմաթիվ այլ ուղղություններ եւ ոչ միայն քաղաքականություն,- նշեց Գիորգի Գախարիան:*

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹ՝ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նենք մեր երկրների բարիդրացիական հարաբերությունները: Միշտ էլ համաձայնել ենք, որ բարձր մակարդակի հանդիպումները հիմք են գերատեսչությունների արդյունավետ աշխատանքի համար: Ջերմությամբ եմ հիշում մեր հանդիպումը Երեւանում, այն անցավ բավական արդյունավետ: Վստահ եմ, որ այսօրվա մեր հանդիպումը եւս լավ հիմք կդառնա երկու ժողովուրդների հարաբերությունների խորացման համար:

Գիորգի Գախարիան հավելեց, որ Վրաստանն ու Հայաստանն ապրում են բարդ տարածաշրջանում, եւ երկու երկրները հասկանում են, որ տարածաշրջանային կայունությունը պետությունների զարգացման հիմքն է:

Իր հերթին, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը շնորհակալություն հայտնեց հրավերի, ջերմ ընդունելության համար:

- Հարգելի վարչապետ, թանկագին Գիորգի, մեր երկրների հարաբերությունների կարեւորությունը դժվար է գերագնահատել: Մեր պետություններն ունեն խորը մշակութային, քաղաքական, պատմական կապեր: Մենք հազարամյակներով ապրել ենք կողք-կողքի, եւ ժամանակն է մտածել այս տարածաշրջանում եթե ոչ հազարամյակների, ապա հարյուրամյակների մեր համատեղ զարգացման մասին: Ասածս ուղղակի գեղեցիկ ձեւակերպում չէ, այլ Վրաստանի հետ հարաբերությունների ռազմավարություն: Մեր երկրներն ունեն ավելի լայն համագործակցություն՝ ե'ւ ընդհանուր, ե'ւ տարբերվող, բայց տարածաշրջանային մեր հարաբերությունները մենք բոլորովին այլ հարթության վրա ենք դիտարկում: Հայ-վրացական հարաբերություններն ամրացնող եւս մի գործոն՝ նվիրվածություն ժողովրդավարական արժեքներին: Այս հանգամանքը եւս մի կարեւոր անկյունաքար է,- նշեց Նիկոլ Փաշինյանը եւ հավելեց, որ վերջին մեկուկես տարվա ընթացքում հաջողվել է Վրաստանի հետ համագործակցությանը նոր որակ հաղորդել, եւ համոզմունք հայտնեց, որ այս այցն է'լ ավելի կամրապնդի երկկողմ փոխգործակցության մակարդակը:

### ՎՐԱՑ-ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ԿԱԶՄՈՎ

Երկու երկրների վարչապետերի առանձնազրույցին հաջորդեց ընդլայնված կազմով հանդիպումը: Բացելով հանդիպումը, Գիորգի Գախարիան ասաց.

- Ուրախ եմ, որ հյուրընկալում ենք ձեզ Վրաստանում: Մենք կառավարության մակարդակով գործում ենք Վրաստանի եւ Հայաստանի միջեւ բարեկամական եւ բարիդրացիական հարաբերությունների խորացման համար: Մեր այցը Երեւան շատ արգասաբեր էր ու տպավորիչ, եւ դրա արդյունքների մասին խոսեցինք աշխատանքի ընթացքում: Համոզված եմ, որ ձեր այսօրվա հյուրընկալությունը եւս նոր արդյունքներ կբերի մեր ժողովուրդների միջեւ բարեկամության ու արդյունավետ համագործակցության համար: Մենք ապրում ենք բարդ տարածաշրջանում, եւ մեր կառավարությունները հստակ գիտակցում են, որ խաղաղությունն ու կայունությունը մեր երկրների զարգացման հիմքն են: Վրաստանի, վրաց ժողովրդի անշեղ որոշմամբ, նրա խաղաղության, կայունության եւ անվտանգության երաշխիքը եվրատլանտյան ինտեգրումն է, եւ մենք այդ ուղղությամբ ենք ընթանում: Համոզված եմ, որ կարեւոր է Արեւելյան գործընկերության շրջանակներում սերտ եւ արդյունավետ համագործակցություն մեր երկու երկրների միջեւ: Ի վերջո, մեր նպատակը երկու պետությունների եւ ժողովուրդների միջեւ բարիդրացիական հարաբերությունների առավել խորացումն է բոլոր ոլորտներում: Համոզված եմ, որ մենք այդ ծրագրի մարմնավորման համար այսօր առաջընթաց քայլեր կկատարենք,- հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:

Իր հերթին, Նիկոլ Փաշինյանը, դիմելով հավաքվածներին, ընդգծեց, որ հայ-վրացական հարաբերություններում առկա է չօգտագործված մեծ ներուժ, եւ կարեւոր է դրա երկկողմ լիարժեք իրացումը: Հայաստանի վարչապետի կարծիքով, երկու երկրների գործադիր մարմիններն ունեն բազմաթիվ հնարավորություններ՝ տնտեսական համագործակցությունը դուրս բերելու բոլորովին նոր մակարդակ: Եվ ապա շարունակեց.

- Մենք հարգանքով ենք վերաբերվում Եվրատլանտյան տարածքին ինտեգրվելու Վրաստանի ձգտումներին: Այնպես է ստացվել, որ մեր երկրներն անվտանգության համակարգերի վերաբերյալ տարբեր պատկերացումներ ունեն, բայց իմ կարծիքով, մենք մեր անվտանգության մասին ունենք ընդհանուր պատկերացում: Հայաստանը չի կարող վտանգավոր քայլ անել Վրաստանի համար, իսկ Վրաստանը չի կարող սպառնալիք լինել Հայաստանի համար,- ընդգծել է Նիկոլ Փաշինյանը՝ հավելելով, որ ՀՀ վարչապետի պաշտոնը ստանձնելուց կես ամիս անց, Վրաստան այցի ժամանակ հենց այդ բանաձեւն է առաջարկել երկկողմ հարաբերությունների հիմքում:

- Մենք ողջունում ենք Վրաստանի այն դիրքորոշումը, որ բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն խաղաղ ճանապարհով: Ընդհանրապես հակամարտություններն աշխարհում, նաեւ մեր տարածաշրջանում բացարձակ տարբեր են, տարբեր են իրենց բովանդակությամբ, ծագումնաբանությամբ, պատմությամբ եւ խորությամբ: Մենք յուրաքանչյուր հակամարտություն դիտում ենք իր առանձնահատկությունների մեջ: Ուրախ եմ, որ այս առումով կարող ենք կառուցողական համագործակցություն ծավալել Վրաստանի հետ: Այն, որ մենք ԵԱՏՄ անդամ ենք, եւ այն, որ Վրաստանն ազատ առեւտրի համաձայնագրի է ստորագրել ԵՄ-ի հետ, ստեղծում են նոր հնարավորություններ մեր համագործակցության համար,- նշեց Նիկոլ Փաշինյանը:

Կողմերը քննարկեցին վրաց-հայկական օրակարգային մի շարք հարցեր, մասնավորապես՝ առեւտրատնտեսական համագործակցության եւ այդ համատեքստում՝

միտված գործարար կապերի խորացմանը: Նիկոլ Փաշինյանը եւ Գիորգի Գախարիան անդրադարձան տրանսպորտի, էներգետիկայի եւ այլ ոլորտներում հեռանկարային նախագծերի իրականացմանը, կարեւորեցին երկու երկրների տրանզիտային ներուժի զարգացումը՝ ցամաքային ճանապարհների, էլեկտրաէներգետիկ եւ հեռահաղորդակցային կապի միջոցով: Քննարկվեց նաեւ բարձր տեխնոլոգիաների, կրթության, գիտության ոլորտներում համագործակցությունը:

Անդրադարձ կատարվեց տարածաշրջանային նշանակության հարցերին: Վարչապետերը կարեւորեցին հակամարտությունների կարգավորումը բացառապես խաղաղ ճանապարհով:

Ընդլայնված կազմով բանակցություններին մասնակցեցին հայկական կողմից արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանը, Ազգային ժողովի փոխխոսնակ, հայ-վրացական բարեկամության խորհրդարանական հանձնաժողովի հայկական կողմի համանախագահ Լենա Նազարյանը, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Սուրեն Պապիկյանը, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Արայիկ Հարությունյանը, բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Հակոբ Արշակյանը, Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը: Վրացական կողմից բանակցություններին մասնակցեցին արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանին, կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Չխենկելին, Վրաստանի խորհրդարանի նախագահի առաջին տեղակալ Գիորգի Վոլսկին, Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն:

Բանակցությունների ավարտին, Վրաստանի եւ Հայաստանի վարչապետերը անցկացրին համատեղ մամլո ասուլիս, հանդես եկան հայտարարություններով:

### ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ԿՇԱՐՈՒՆԱԿԵՆՔ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ՄԵՐ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ»

- Պարոն վարչապետ, ինձ համար մեծ պատիվ է, օգտվելով ընձեռված հնարավորությունից, ողջունել Ձեզ Թբիլիսիում, Վրաստանում:

Մեր երկրների բարեկամական հարաբերությունները հազարամյակների պատմություն ունեն, եւ մենք ամեն օր պետք է աշխատենք, որպեսզի մեր համագործակցությունը դառնա առավել արդյունավետ: Մենք այսօր անդրադարձանք մեր երկու երկրների բարեկամական ու բարիդրացիական հարաբերությունների է'լ ավելի խորացմանը, խոսեցինք տարբեր՝ անվտանգության, էկոնոմիկայի, մշակույթի, կրթության ոլորտներում համագործակցության մասին:

Վրացական կողմն ընդգծեց, որ Վրաստանի քաղաքացիների որոշումն է եվրատլանտյան ինտեգրումը, եւ այդ ուղղությամբ երկիրը անշեղ է ընթանում: Հետեւաբար, պայմանավորվեցինք, որ մեր երկու երկրների միջեւ անկախ արտաքին քաղաքական կողմնորոշման, թույլ չենք տա որեւէ անհասկանալիություն կամ թյուրիմացություն եւ բարեկամական, բարիդրացիական կտրվածքով շարունակելու ենք համագործակցությունը:

Մենք ողջունում ենք Հայաստանի ակտիվ համագործակցությունը արեւելյան գործընկերության շրջանակներում, ինչը մեզ համար նշանակալից է, եւ գտնում ենք, որ դա այն ուղղությունն է, որտեղ մեր երկրները պետք է արդյունավետ համագործակցեն:

Պարոն Վարչապետ, կրկին շնորհակալություն եմ հայտնում այն օրերի համար, որոնք վրացական կողմն անցկացրեց Երեւանում:

Բարի լինի ձեր այցը Թբիլիսի:

Համոզված եմ՝ այս երկու օրերը արդյունավետ կօգտագործենք հանուն մեր քաղաքացիների շահերի:

### ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ. «ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՏՈՒՄԸ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՎ ԱՊԱԳԱՅԻ ԿԱՌՈՒՑՈՒՄՆ Է»

Դիմելով ընդլայնված նիստի մասնակիցներին, Հայաստանի վարչապետն ասաց.

- Ցանկանում եմ անձամբ իմ եւ Հայաստանի պատվիրակության բոլոր անդամների անունից շնորհակալություն հայտնել Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիային՝ Վրաստան հրավիրելու եւ ջերմ ընդունելության համար: Երջանիկ եմ ընձեռած հնարավորության համար: Ես բազմիցս նշել եմ, որ Վրաստանի հետ հարաբերությունների զարգացումը մեր երկրի արտաքին քաղաքական կարեւորագույն հարցերից մեկն է: Համոզված եմ, որ դրա համար բոլոր նախադրյալներն առկա են: Անտարակուսելի է, որ բազմադարյա բարեկամությունը, որը հիմնված է ընդհանուր արժեքների եւ պատմական ժառանգության վրա, հուսալի հիմքեր է ստեղծում մեր համագործակցության համար:

Բավականությամբ վավերացնում եմ, որ այսօր ի հայտ եկան նոր գործոններ, որոնք ընդգծում են մեր բարեկամության անխախտելիությունը եւ առավել ուժեղացնում համագործակցության մեր միտումը: Դա, առաջին հերթին, ժողովրդական արժեքների վրա հիմնված ապագայի կառուցման մեր ժողովուրդների ընդհանուր միտումն է: Այսօր իմ եւ պարոն Գախարիայի միջեւ բանակցությունները անցյալ տարվա հոկտեմբերին Երեւանում սկսված բանակցությունների շարունակությունն էին: Ընդգծում եմ, որ, տեւական ընդմիջումից հետո, անցյալ տարվա հունիսին Երեւանում անցկացվեց միջկառավարական հանձնաժողովի նիստը: Խոսեցինք տրանսպորտի, էներգետիկայի եւ մյուս ոլորտների հեռանկարների շուրջ, ընդգծվեց երկու երկրների տարանցիկության ներուժի զարգացման նշանակությունը, խոսեցինք ոչ միայն պետական երթուղիների, այլեւ էլեկտրաէներգետիկակական եւ հեռուստահաղորդակցության կապերի մասին: Քննարկեցինք մի շարք հարցեր, որոնք առնչվում են բարձր տեխնոլոգիաներին, կրթությանն ու գիտությանը:

Անդրադարձանք տարածաշրջանային անվտանգությանն ու խաղաղությանը: Անտարակուսելի է, որ Հայաստան-Վրաստան գործընկերությունը մեր տարածաշրջանի կայունության ապահովման նշանակալի երաշխիքներից մեկն է:

Ցանկանում եմ խորին համոզվածությամբ նշել, որ տարածաշրջանային հարցերի կարգավորման միակ ուղին խաղաղ բանակցություններն են: Համոզված եմ նաեւ, որ յուրաքանչյուր հակամարտություն ունի իր յուրահատկությունը, եւ այդ տեսանկյունից մեծ նշանակություն ենք տալիս նրբին հարցերի շուրջ հավասարակշռված դիրքորոշման պահպանմանը:

Երախտապարտ ենք Վրաստանի իշխանությանը նրա հետեւողական քայլերի համար Վրաստանում մեր ազգային ինքնության, մշակութային եւ հոգեւոր ժառանգության պահպանման համար:

Կրկին շնորհակալություն եմ հայտնում պարոն Գախարիային Հայաստանի պատվիրակությանը նման բարձր մակարդակով ընդունելու համար: Տեղեկացա նաեւ, որ այսօր Վրաստանում նշվում է «Մայրության օրը» եւ օրվա առիթով շնորհավորում եմ Վրաստանի բոլոր մայրերին:

(Շարունակությունը՝ 5-րդ էջում)